ԱՄԵՆԱՑՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Պարտին ուղղուիլ առ—
Խմբագիր և Տնօրէն
«ՀԱՅԿ»ի
ՏՈՔ. Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ.

Զեռագիրք Չեն Վերադարձուիր

—Բաժանորդագրութիւնք—
Ամէն երկրաց համար
ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ ԿԱՆԽԻԿ

ՀԱՅԿ

HAIK
ARMENIAN POLITICAL AND HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL, M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A
To whom all communications must be addressed.
Terms for all Countries.
One Year - - - - $ 2.00.

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ եւ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M D.
Տէր-Խմբագիր—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
202 W. 23rd St., New York City, U. S. America.

Ա. ՏԱՐԻ | ՆԻՒ ԵՈՐՔ | ՀՈԿՏԵՄԲԵՐ 1 1891 | ԹԻՒ 19

Entered as second-class mail matter. at P. O. NewYork.

ՌՈՍԸՆԴՐԿՈՒԹԻՒՆ

Ընդենախօսութիւն. — Պալքանեան փոքր Պետրոսեանց Նիկոլակիոսեան. — Ը. Պ. Մ. Փոքրոտաքեան. — Նոմակ 11,000 էն. — Նախանձ. — Բարոյական Ընաթ. — Լուրք Մէջերով. — Նոմակ Կ. Պոլսէն. — Նոմակ Պարսկաստանէն. — Նոմակ Կ. Պոլսէն — Ո-ղեր Հահէն. — Ջոյրն Եսայեանէ Ալի Ալի

ԸՆԴԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

ՈՒՂՂԵԱԼ

Ա Ռ

ՈՒՍՔՈՒԴԱՐԱՆ ՀԱՅԲԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒ

Ի 6 ՍԵՊՏ. 1891

(Ինչպէս նախորդ թուով յիշուած է, «Հայք»ի Տընօրէնն օգտակարութեան դնալով երբ Ուսքիւդարէն կ'անցնէր, հայրենակիցք ոմանք փափաք յայտնեցին զումարում մ'ունենալու, և արագօրէն կատարուած կարգադրութեանց շնորհիւ՝ ունկնդրաց զոհացուցիչ բազմութիւն մի ներկայացաւ լսելու այն ատենախօսութիւն, զորոյ համառօտութիւնն կուտամք ասա:)

Մեծ. Ատենապետ և սիրելի հայրենակիցք,

Խմբագրական փորձառութիւնս բազում ինչ սովրեցուցած է ինձ ինն ամսէ ի վեր, զորս պարզել կը վերապահեմ ապագայ առիթներու. այս երեկոյ դառն փորձառութեանցս մին միայն կամիմ բացատրել ձեզ — այն թէ որքան պարզ և որքան յստակ գրէ խմբագիրն, ազատ չմնար թիւրիմացութեանց մատնուելէ շնորհիւ այն կարգի արարածոց որք մասնաւոր տաղանդ մ'ունին, կամ որոց բոլոր տաղանդն կը կայանայ ի խեղաթիւրել պարզ խօսքեր և ի պղտորել յստակ տեսութիւններ:

Գծուած խեղաթիւրութեանց վերջին օրինակն որ տեսայ է այն որ կուտայ իմանալ թէ ես կեդրոն կամ միութիւն կազմակերպելու գաղափարն կը ջատագովեմ որպէս թէ այս ինչ գործիչի թելադրութեամբ։ Այո՛, զայդ գաղափար ջատագովել սկսայ յօրէ յօրմէ հետէ Տիար Զերազ Եւրոպա նետուեցաւ, վասն զի ինձ կը թուէր թէ մեծ սխալ կը գործէինք եթէ Զերազի ահագին ուժին և հաղուագիւտ տաղանդին չընծայէինք գործունէութեան ասպարէզ այնքան ընդարձակ որքան հնար էր։ Ես գրեցի նմա 1889ին ինչպէս նաև միւս գործիչներուն, պարզելով իմ համոզում. զայս ըսած եմ հրապարակաւ. բայց նա որ խեղաթիւրելով զայս կ'ուզէ զզուանք պատճառել մեր ընտրանաբնակ հայրենասիրին, անխիղճ և գծուած քննադատ մ'է։ Կը բողոքեմ այդ եւ ատոր զուգորդեալ քսութեանց և ստայօդ մարդարէութեանց դէմ։ Կը բողոքեմ ամեն անոնց դէմ որք իրենց նպատակին հասնելուն համար ստեր կը յօդեն, զրպարտութիւններ կը կարկատեն, բերանս կը դնեն ինչ որ ըսած չեմ, կը գուշակեն գաղտնիքներ զոր չունիմ, եւ կ'ընծայեն ինձ շարժառիթներ որք օտար են ինձ։

Հայրենակիցներ, կը բողոքեմ ստով, զրպարտութեամբ և ճշմարտութիւնն ոտքի տակ առնլով հայրենասէր լինելու յաւակնութեան դէմ։ Նաև կը բողոքեմ անոնց դէմ որք արդարութեան, իրաւանց և մարդասիրութեան հակառակ եղանօք հայրենիքն փրկել կ'երազեն։

Ցաւալի է տեսնել մարդիկ որք անդադար կ'աղաղակեն Ազգասիրութի՛ւն, և որք սակայն եղկելի գաղափարներ ունին ազգասիրութեան վերայ։ Այսօր երիտասարդ մ' ինձ կ'ըսէր թէ տինամիդով օդն հանել պէտք է մզկիթ մի 1500 Թրքերու գետնամած երկրպագութիւն արած պահուն, որպէս զի արդիւնք յառաջ գայ։ Զգիտեմ ե՛րբ և ի՛նչ առթիւ այս հաւաքական ըսպանութիւններն պիտի կրնան գործել պալատ՝ մզկիթ՝ զօրանոց օդն հանելով, և ի՛նչ արդիւնք պիտի յառաջ գայ։ Կ'երևի թէ այսպիսիք չեն մտածեր թէ թուրք ժողովրդեան մէջ ստուար թիւ մի կը կազմեն անոնք որք դրեթէ մեզի չափ ճանձրացած են բռնապետ կառավարութենէն և մեզի չափ յաճախ կ'անիծեն զեղծ պաշտօնեաներն։ Չեն մտածեր թէ մեր դատ բռնապետ կառավարութեան հետէ, այն Բ. Դրան հետ, որ վատթար ու դիւաչունչ քաղաքականութեան կը ծառայէ, ոչ թէ թուրք ժողովրդեան հետ որ արդահատելի է իւր խեղճութեան ու տգիտութեան համար։ Ոչ ոք կը մտածէ, թուի թէ, Թրքաց ազատական դասուն հետ յեղափոխական դաշնակցութիւն փորձել հասարակաց գանգատներու հիմանց վերայ, այլ շատուր են անոնք որք ստայօդ զրոյցներ ու ջջուկներ տարածելով այնպէս կարծել կուտան թուրք հասարակութեան թէ Հայերս մեծ

բաղձանք և պատրաստութիւններ ունիմք զիրենք ջարդելու։ Եթէ ունենայինք իսկ այդ պատրաստութիւններ, պարտէինք կասկած չտալ նոցա, ո՞ւր կը մնայ որ զուրկ եմք անոնց ջարդ տալու կարողութենէն՝ լինելով անզէն և անվարժ և փոքրաթիւ միանդամայն։ Ես համարձակ կ'ըսեմ թէ այն Հայեր որք չափազանցեալ զրոյցներ շրջեցնելով Թրքերն ամեն ուրեք այժմու գրգռեալ և կասկածոտ վիճակին հասուցին, թէև ազգասէր լինին, չեն լուսամիտ. և աւելի վնաս կը գործեն Ս. Գործոյն քան թէ օգուտ։

Հայե՛ր, լայնցուցեցէք մեր սիրտ, և երախայական անձուկ ազգասիրութեան երթաս բարով ընելով մեր հայրենասիրական հուր շրջապատենք մարդասիրութեան լուսեղէն շրջանակաւն լայնածիր։

Այպանելի և խղճալի ազգասէրներու կարգին կը վերաբերին նոքա ևս որք կրօնական և եկեղեցական տարբերութիւններ պատրուակ առնելով՝ ցրտութիւն և անմիաբանութիւն կը տարածեն հայ ժողովրդեան մէջ։ Ո՞րչափ ամօթ է որ դեռ հարկ կայ յորդորելու զձեզ որ լուսաւորչական և բողոքական հայրենակիցք վեր բարձրանաք կրօնական խտրութիւններէ և ապրիք ու գործէք Ս. Գործոյն մէջ ձեռն ի ձեռն։ Ճշմարիտ զայրոյթ կը զգամ անոնց դէմ որք յանուն եկեղեցւոյ կուգան վերստին փորել ձեր միջև խորոյ մի որ զրեթէ ի սպառ անհետացած էր։

Սիրելի հայրենակիցք, չեմ խօսիր ձեզ այնպիսի բաներ զրոյս ընելու վարժուած էք ժամանակէ մ'ի վեր։ Կը խօսիմ ինչ որ ճշմարիտ կը թուի ինձ և ոչ՝ ինչ որ հաճելի կրնայ լինիլ ձեզ։ Զենէ ոմանք պիտի ըսեն թէ ես թայլ ազգասէր մ'եմ, վասն զի Թրքին դէմ ատելութիւն չեմ քարոզեր այլ թուրք բռնապետութեան դէմ։ Ուրիշներն ալ պիտի ըսեն թէ ես այս ինչ գործիչն բռնական չեմ յարգեր քանի որ միւս գործիչներն չեմ հերքեր։ Ըսէք ինչ որ կամիք, և չպիտի կրնաք աւելի խիստ բաներ ըսել քան զոր ըսին արդէն թերթերէն ոմանք։

Ես չեմ պնդեր, Հայեր, թէ իմ դաղափարք անսխալ են և տեսութիւնք անքննադատելի. բայց համարձակ կ'ասեմ թէ այն խմբագիրներ որք կը քննադատեն զիս, բոլորովին զուրկ են վայելչապէս քննադատութիւն ընելու կրթութենէն և ազնուութենէն։ Ես կը քննեմ նոցա գործելու եղանակներն, ծրագիրներն, դաղափարներն, բայց չեմ երթար մինչև սուտ մարդարէութեամբ գուշակել իրենց շարժառիթներն։ Բննեցէք «Հայք»ի բոլոր թիւեր. երբէք ըսած չեմ թէ այս կամ այն գործիչ փառասիրութեան կամ շահախնդրութեան ոգւով կը գործէ։ Թող այլք ևս ընեն ինձ որպէս ես կ'ընեմ այլոց։ Թող ըսեն թէ փաստերս փաստ չեն, թէ սխալ կը խորհիմ և անարդար դատաստան կ'ընեմ. Թող յայտարարեն թէ ես իւթոփիսթ մ'եմ զհետ պնդեալ անկարելւոյն. Թող կոչեն զիս խակամիտ, պարզամիտ, յիմա՛ր, և Ես մուռ անեմ, խոկամ, ներեմ. բայց երբ զիս իբրև մատնիչ և վասակ կը ներկայացուցեն, կը խոցիմ, կը տխրիմ, կ'արհամարհեմ, կը բողոքեմ, կը բողոքեմ թէև ըսողն լինի գործիչ, լրագրապետ, վարժապետ կամ վարդապետ, կը բողոքե՛մ

Այս խօսքեր ջերմ ծափահարութեամբք ընդունուեցան յետոյ, քուէի դրուեցաւ Տիեզերական Կեդրոնի մի կազմակերպութեան առաջարկն և 6ի դէմ 46 քուէիւք ընդունուեցաւ։

Նոյն ատեն բազմաթիւ հայրենակիցք բաժանորդ դրուեցան «Հայք»ի։

ՀԱՅՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՅՐ»ի բաժանորդ գրուիլ ուզողներուն կը ծանուցանեմք թէ թերթիս առաջին թիւէն սկսեալ կարող եմք յղել իրենց. Նոյնպէս պակասեալ թիւերն կրնամք յղել այն բաժանորդաց որք կը բաղձան ամբողջ տարեկանն կազմել տալ, ինչպէս կը տեղեկանամք թէ շատերուն փափաքն է։

Պարսկաստանի Հայոց համար բացառութիւն ընելով, թերթիս տարեկան բաժանորդագին կը նշանակեմք եօթն ուկէս ֆրանք։

ՊԱՏԱՐԱԳԱԿԱՆ ՀՈՐԻԶՈՆՆ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹԵԱՆՑ ՆԻՉԱԿԱՑՈՒԹԻՒՆՆ

Ռումանիա, Պուլկարիա, Սերպիա և Յունաստան կրնային պատկառելի այժ մի լինել եթէ նիզակակցէին, և Արևելեան Խնդրոյն լուծման մէջ անկախ ազդեցութիւն մ'ի գործ դնել։ Այդ մանուկ պետութեանց իւրաքանչիւրն այժմ հզօրագոյն պետութեանց միոյն կամ մի քանիներուն քաղաքական և տնտեսական արբանեակն է, բայց եթէ ամենն միանային հասարակաց շահու և փոխադարձ զիջման հիմանց վերայ, կարող կը լինէին իրենց միացեալ ուժոյ հետ ունենալ քաղաքական անկախ կամք մ'ալ, և չէին սպասեր որ Եւրոպեան երէց եղբարք ըստ իւրեանց շահու բաղադրէին և լուծէին ամեն խնդիր։ Ռումանիա 150,000 զօրք և Պուլկարիա 100,000 կրնայ հանել յասպարէզ պատերազմի։ Յունաստան նաւատորմիղ մ'ունի գերազանց Թրքականին, և կարող է յոյժ կարևոր դեր մի կատարել պատերազմի առեն։

Տարիներէ ի վեր պալքանեան նիզակակցութեան մի գաղափարն երբեմն երբեմն կ'երևէր մամլոյն մէջ, բայց վերջերս միայն գործնական փորձ մ'եղաւ այդ գաղափար իրացուցանելու համար։ Յունաստանի մեծագոյն պետական մարդն, Թրիքուփիս, յատկապէս այցելեց և անձամբ բանակցեցաւ սերպիական և պուլկարական քաղաքագիտաց հետ այս խնդրոյ մասին։ Սերպիացիք ջերմ ընդունելութիւն մ'ըրին նմա, և արդէն այդ նիզակակցութեան համար աշխատող յատուկ ընկերութիւններ կան ի Սերպիա, որոց սկզբունքն է խորշիլ պալքանեան փոքր պետութեանց մէջ կռիւ և անհամաձայնութիւն յարուցանելէ, քարոզել եղբայրութիւն և միութիւն։

Թրիքուփիս նոյնքան յաջող չեղաւ Պուլկարիոյ մէջ։ Պ. Սթամպուլոֆ, Պուլկարիոյ նախարարապետն, որ զերբեակ նիզակակցութեան և Անգղիոյ նեցուկն ունի և Թուրքիոյ կողմէն ալ արդէն ամեն հնարաւոր չընորհք և զիջողութիւն ընդունած է, խոհեմութիւն չհամարեց, միջազգային ներկայ կացութեան մէջ, պալքանեան նիզակակցութիւն ջատագովել։

Թրիքուփիսի գաղափարն այն է թէ այսպիսի նիզակակցութեան մի շնորհիւ կրնան փոքր պետութիւնքն իրենց բաղադրեալ ճնշմամբ ի վերայ Բ. Դրան առնուլ Հիւանդ Մարդուն ձեռքէն Թրակէն, Կրէտէն եւ Մակեդոնիան, առանց սպասելու այն վայրկեանին յորում Եւրոպա վերջնականապէս և ըստ իւր հաճոյից պիտի բաշխէ եւրոպական Թուրքիան։ Դժբաղդաբար պալքանեան փոքր պետութեանց ամենուն շահերն չեն համաձայնիր իրարու։ Յանուանէ Պուլկարիա և Ռումանիա մանաւանդ Ռուսիոյ դէմ դնելու համար յենակէտ կը խնդրեն քան Թուրքիոյ։

Քաղաքական հորիզոնն Թրիքուփիսի այդ այցելութիւններէն ի վեր մեծ փոփոխութիւն կրեց։ Օսմանեան դիւանագիտութիւնն Ֆրանքօ-ռուսական աղդեցութեան կը հպատակի, փոխանակ երբեակ նիզակակցութեան և Անգղիոյ շուրջն դառնալու։ Արևելեան խնդրոյն և պալքանեան բաղադրութեանց վերայ մեծապէս ազդելու բնութիւն ունի այս ահագին դարձն Հիւանդ Մարդուն դէպ ի Ֆռանքօ-ռուսական միութիւնն։ Հայ դիւանագէտներուն համար ևս լուրջ մտածութեան նիւթ կ'ընծայէ այս դարձ։

ԲԵՆՑԹԲ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

Այս գրքոյկ պիտի պարունակէ 27 ընտիր հայկազանց նուրբ փորագրութեամբ պատկերն։ Բաժանորդագրութեան գինն է 4 ֆրանք, կանխիկ վճարելի։ Բաժանորդ գրուիլ ցանկացողք դիմեն հետեւեալ հասցէին,
Direction de L'Imprimerie Armenieune, Venise, St. Lazare

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Քաջալերական է տեսնել թէ հայ ժողովրդեան մէջ հետզհետէ աւելի կը զօրանայ կեդրոնածիգ շարժումն։ Ն. Եորքի Հ. Հ. Յանձնախմբին և «Հայք»ի ուղղեալ նամակներ գոհացուցիչ տեղեկութիւններ կուտան այս մասին։ Հայրենասիրական փոքր փոքր յանձնախմբեր շատ տեղեր միացած՝ աւելի մեծ մարմիններ կազմած են, և այդ միացեալ ոյժեր այժմ կը գործածեն տիեզերական կեդրոնի գաղափարն իրացուցանելու։ Շատ տեղեր, ուր դաղթականք առանց ժողովոց և առանց կազմակերպութեան էին, այժմ ջանք կը լինի քայքայեալ ընկերութիւն մի կամ ցրուեալ յանձնախումբ մի վերակազմել, որպէս զի կարող լինին կեդրոնի մի կազմութեան օգնել։

Մեր ներկայ վիճակ քաոս մ'է, ուր նիւթերն կը շարժին, հիւլէներն կը միանան, և կամաց կամաց կերպարան կ'առնու այն որ պիտի կոչուի Հայ Աշխարհն։

Ո վեհ հայ հոգիներ, շարժեցէք, շարժեցէ՛ք այդ աներևոյթ և անպատրաստ քաոսի վերայ, և կազմ ու կերպարան տուէք նմա։

Ահաւասիկ «Հայք»ի ուղղեալ նամակ մի 11000էն, որ այժմ կը բաղկանայ այլ և այլ յանձնախմբոց միութենէ մի։

Կ. Պոլիս 1891 Օգոստ. 13

Մեծապատիւ Տէր,

Կեդր. Միաց. Մասնախումբս այս անգամ նորանոր ոյժերով ամրացած, կրկին կը դիմէ ձեզ թախանձել ձերդ հայրենասիրութիւնը որ գայ միացնել մեզ իր մեծ հաւանութիւնն որ շատ զօրաւոր մղիչ մը պիտի լինի սուրբ նպատակին յառաջացման, Սուրբ Գործը որ պէտք անկասար է հասուննայ և քաղցր ու փափաքելի դառնայ բոլոր հայրենասէրներու և «բանը լինի մարմին ու բնակի ի մեզ»։

...Կառավարութիւնը որ նախապէս կը սոսկար այժմ երբ ամեն բան պարզօրէն կը նշմարէ, աւելի կը ճնշէ մեր տկարութիւնը ու քթին տակէն կը խնդայ այդ մասնախմբոց վրայ. ցնծութեամբ կը ծափահարէ մեր իրար ընդհարումներն ու մեր խմբոց միոյն ի Հիւսիս միւսոյն ի Հարաւ, միոյն Արևելք և ուրիշի մը յԱրևմուտս արշաւելը։ Հոն կը կոարտին մեր արդէն տկար ոյժերն, և խեղճ տառապեալ Հայը, որ օր ըստ օրէ կ'իյնայ, կ'աշխարէ ու կը սպառի իր մայր հայրենիքին մէջ՝ անգութ բռնաւորին արիւնոտ ճանկերուն տակ։ Ուրեմն հայրենասէր տէր, պէտք է թօթափենք այս օրհասականի մէջ ամեն կուսակցական ոգի, ամեն անձնական փառք, շահախնդրութիւն (ինչ որ ճշմարիտ հայրենասիրի մը նուիրական պարտքն է), կազմենք մեր մէջ հոգեկան ամեն վեհութիւն ու ազնուութիւն, մէկ սիրտ, մէկ հոգի ու մէկ ուղղութիւն ունենանք, որպէս զի համայն ժողովրդեան կատարեալ վստահութիւնն դրաւելով, զօրեղապէս մաքառինք մեր Սուրբ Դատը պաշտպանելու համար բողոքով ու սուրով։

Կը պոռան մեզ այսօր հազարաւոր հայ ժողովուրդք որոց ոգիներն մինչև կոկորդ են բարձրացած անգութ Թուրքի բռնութեան տակ, կը պոռանք անոնք և մեք մեր սուր բռնելու կարող ձեռներն ի վեր առած ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆ...։ Սակայն ափսոս չկայ մեր ձեռք սուր զի չկայ դրամ, չկայ դրամ զի չկայ ՄԻՈՒԹԻՒՆ։

Ուրեմն տէր, կը խնդրէ միութիւնս որ յանուն ձեր հայրենասիրութեան, յանուն մեր Սուրբ Գործին, և ի սէր մեր խեղճ ազգի փրկութեանը, հրաւէր կարդաք ձեր ազգօգուտ թերթի միջոցաւ և հրապարակախօսութեամբ ամէն Հայու և խումբերու որպէս զի ջանան միանալ, և ձեր հաւանութիւնն ալ ուղղէք մեզ։

Այս գործով մեր միակ նպատակն է միացնելով զձեզ ու զմեզ, կազմել մեծ կեդրոնական միութիւն մի յԵւրոպա, ուր կարենաք զօրեղապէս մէկ ուղղութեամբ գործել, հրահանգ տալ մեզ ու հրամայել հայ ժողովրդին որին մէջ շատ են յօժարամիտներ նահատակուելու երբ կուտաք անոր ԶԷՆՔ ու կը լինիք ԱՌԱՋՆՈՐԴ։

Դուք աւելի լաւ կը նախատեսէք քան զմեզ թէ ազգի փրկութիւնը միակ այդպիսի մեծ միութեան մը մէջ կը կայանայ։ Հետևապէս վստահ ու աներկրայ ենք թէ սիրով պիտի միանաք երբ ճշմարիտ հայրենասէր։

Ի դիմաց Կեդր. Միաց. Մասնախմբոց Դիւանին

11000

ԱՌ Պ. Մ. ՓՈՐԹՈՒՔԱԼԵԱՆ

ԱՐՄԷՆԻԱ 5 թիւին մէջ «Խոստովանութիւն մի» խորագրոյն տակ ընթերցայ ձեր պատասխան «Հայք»ի 16 թիւի առաջնորդող յօդուածիս։

Կ'ասէք ձեր ընթերցողաց թէ ՀԱՑՔՆ «սատակ յարձակումներ ըրաւ «Հայոց Հայրենասիրական Միութեան,» «Արմէնիա»ի և անոր խմբագրի անձնականին դէմ, բոլորովին սուտ և սխալ լուրեր և կեղտոտ զրպարտութիւններ գրելով։»

Իմ այն յօդուածի մէջ ոչ լուր կայ ոչ զրպարտութիւն, այլ «Արմէնիա»ի այլ և այլ թիւերէն ճշդիւ բառ առ բառ կոչում եղած խօսքեր կան, և այդ խօսքերու լուրջ և տրամաբանական իմ հերքումներն։

Դուք տեսնելով զՁեզ յանհնարութեան պատասխանելոյ այնց, կը ծանուցանէք ձեր ընթերցողաց թէ «սուտ և սխալ լուրեր և կեղտոտ զրպարտութիւններ» գրած եմ։

Ահա այդ ձեր լուրն է սուտ, ահա այդ ձեր խօսքն է զրպարտութիւն։

Այդ անորոշ զրպարտութեան վերայ յաւելած էք սա որոշ սուտ ևս, ասելով թէ «Հայքի խմբագիրն Հայոց Հայրենասիրական օթեակներէն դուրս ձգուած է։»

Բարձրաձայն կը յայտարարեմ թէ բնաւ երբէք ես ձեր օթեակներուն մէջ մտած չլինելով՝ չէր կարելի որ անոնցմէ դուրս ձգուէի։ Դուք զայս քաջ գիտէիք, և սակայն հակառակն ծանուցիք ձեր ընթերցողաց։

Ահա այդ ձեր լուրն է սուտ, և գծուծ սուտ։

Վերջացուցեր էք սուտերու շարքն ասելով թէ «Հայք»ն զզուանքով մէկդի կը նետեն և չեն ուզեր կարդալ այժմ ամեն ողջամիտ Հայեր։»

Կ'ասէք ո՛չ ինչ որ տեսած էք, այլ ինչ որ կը բաղձայիք տեսնել։ Եթէ պնդէք, պիտի ապացուցանեմ թուանշաններով թէ թերթիս բաժանորդներն շարունակ կ'աւելնան, և շնորհքով նամակներու դէղով մի պիտի ցուցնեմ թէ ո՞րքան ախորժով կ'ընթեռնուն զայն ամեն անոնք որք կը սիրեն զգօն թերթեր։

Զզուած են ողջամիտ Հայեր ոչ ՀԱՑՔԷն այլ ա՛յն թերթերէ որք, գլխովին անհաւատարիմ իրենց կոչման, կ'աշխատին ժողովրդեան յառաջադէմ շրջափոխութիւնն կասեցուցանել, ստեր և զրպարտութիւններ դարբնել և ազգային խնդիրներն յանձնական դձուձ պայքար այլասերել։

Զայս ալ կրնայի հաստատել ասէն հրատարակելով նամակներն այն մշակեալ երիտասարդաց, որոց սիրտ նոզկացած և ոգի զայրագին՝ կը խնդրեն «Հայք»ի միջոցաւ խարազանել մամլոյ սուրբ տաճարն պղծող լրագրապետներն — լրագրապետներն՝ որք իրենց այլանդակ ստերով և անզգաւ զրպարտութեամբք հայ հանրային իմացողութիւնն կը նախատեն և հայ մամուլն կ'անպատուեն։

Այդ ճապուկ խարազաններու խուրձն կը պահպանեմ, մաղթելով որ զայնս գործադրելու չհարկադրուիմ։

Եւ կը խրատեմ զձեզ որ այլ ևս չստէք։

Ստելն տկարութիւն է, և զրպարտելն վատութիւն։

Պ. Փորթուքալեա՛ն, զՁեզ այդքան փոքր չէի կարծեր։

Տխուր տպաւորութիւնն զոր կ'ազդէք ազգային հաւատքիս, կը փարատի իսպառ երբ կը մտածեմ այն բարձր հանճարներ և վեհ սրտերն հայ որք կարող են իմ անկեալ Ազգն վեր առնուլ։

Կը պաշտեմ զայնպիսիս որք հանճարի հետ ունին նկարագիր։

Կը սիրեմ զայնս որք առանց տաղանդի և մշակութեան են բայց ունին ուղիղ բնաւորութիւն։

Կ'արդահատիմ անոնց վերայ որք թէև հայրենասիրական կիրք մ'ունին, այլ զուրկ են մտքի և սրտի զօրութենէ. և որք ամեն աղտոտ գործիք կը գործածեն անիրաւ ճանապարհն յաղթելու համար կարծեցեալ հակառակորդի մի որ անյաղթելի է։

Միթէ ճշմարտութիւնն կը յաղթուի՞։

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱՆՁ

Կ'երևի թէ նախանձոտութիւնն հայկական բնաւորութեան մէջ տարրացած է։ Եթէ Հայքս լինէինք այնքան նախանձաւոր միմեանց յառաջադիմութեան որքան նախանձոտ ենք, ազգն կրնար բանաւորապէս յուսալ փութով ազատիլ իւր դարաւոր ստրկութենէն։ Իրողութիւնն այս է թէ այժմ, որպէս ի հնումն, մեր մեծագոյն թշնամին է ներքին և ո՛չ արտաքին, բարոյական է ո՛չ քաղաքական, Հայն է ոչ Թուրքն։ Կարիճն երբ շրջապատի կրակի կայծերով զանձն կը խայթէ և կը մեռուցանէ։ Նոյնպէս ամեն մեռեալ ազգ անձնասպան եղած է։ Երբ ահեղ փոթորիկն անտառին մէջէն մռնչելով կուգայ արմատախիլ ընել բարձրահասակ կաղնին, սա փոխանակ կործանելու կը խոնարհեցունէ միայն իւր վայելչաձև մարմին որպէս թէ կ'ուզէր ողջունել և հաշտեցունել ահարկու թշնամին։ Բայց ինչ որ փոթորիկն չկրնար ընել որդեր շատ դիւրաւ կ'ընեն. քանզի եթէ ծառն ի ներքուստ չորացած է, զեփիւռն իսկ կրնայ տապալել նորա հսկայական մարմին։ —

Անդստին ի մանկութենէ հայկական հրապարակախօսութիւնն ինձ զուարճութեան աղբիւր եղած է։ Դուն ուրեք կը լսէի ճառ մի որ ազգասիրութեան եւ միաբանութեան չյորդորեր ունկնդիրներն։ Բայց կա՞յ աշխարհի վերայ ազգ մի որ աւելի յաճախ կ'արտասանէ այս բառերն և այնքան քիչ կը զգայ նոցա նշանակութիւն որքան Հայն։ Միթէ անհասարա՞կ բան է ազգասիրութեան ամեն հանգամանքէ զուրկ անձի մի հանդիսանալ իբրև բարերար Հայութեան։ Ո՞չ ապաքէն նախանձու թունաւորեալ բերաններ յաճախ զմեզ ի միա բանութիւն կը յորդորեն։ Մեր հայրենասիրութիւն շատ անգամ կատակերգի երևոյթն կ'առնու։ Ազատութի՛ւն կ'աղաղակենք երբ ճշմարիտ ազատութեան ոգին մեզ կը պակասի։ Շատ «ազգասէրք» պարզապէս ազգատեաց են։ Անձնապաշտն ի՞նչպէս կրնայ ազգասէր լինիլ։ —

Յորմէ հետէ Ամերիկա եկայ ընտիր առիթներ ունեցայ մեր փոքրիկ և ստրուկ ազգն բաղդաւորելու այս մեծ և ազատ ժողովրդեան հետ։ Արդարեւ Հայն փոքր է ոչ միայն մարմնով, այլ մանաւանդ ոգւով։ Մեծահոգի և մեծասիրտ Հայեր մարդ քիչ անգամ կը տեսնէ։ Բարոյական մեծութեան տարերքն կարծես ի սպառ անհետացեր են մեր ազգային բնաւորութենէն։ Ամերիկա այցելած չեմ հայ գաղթականութիւն մի, մեծ կամ փոքր, ուր գժտութեան և երկպառակութեան սերմն արմատացած չէ։ Կը թուի թէ հինգ կամ վեց Հայեր չեն կրնար ի միասին գործել և ապրիլ առանց իրարու դէմ ստելու, զրպարտելու, նախանձելու։ Կղերականք իսկ շատ ունինք որ բարոյական ճշմարտութիւն մի յարգելու անկարող կը թուին։ Հայրենեաց փրկութեան գործն իրենց պարզապէս անձնասիրական խնդիր մի դարձած է։ —

Օրինակ մի տամ և վերջաբանեմ։ Տարիէ մ'ի վեր «Հայք» կ'աղաղակէ թէ Հայրենեաց փրկութիւնն իրագործելու համար անհրաժեշտ հարկ է մեզ մեր ջանքեր և ոյժեր կեդրոնացունել։ Ահաւասիկ խնդիր մի որ առաջին ասպիճանի կարևորութիւն ունի և լուրջ և անաչառ մտածութեան արժանի է։ Եթէ կայ խնդիր մի զոր պարտինք քննել անձնական նկատումներէ զերծ ոգւով, մեր թէ՛ քաղաքական թէ՛ բարոյական ազգային ոյժերուն կեդրոնացման խնդիրն է։ Բայց ո՞րքան ցաւալի է տեսնել թէ շատ ազգային գործիչք և առաջնորդք չեն ուզեր առաջարկին ոգին ըմբռնել, և որ աւելին է, կը յամառին նախապաշարել իրենց ունկնդիրներ որպէսզի խնդիրն մի կամ աւելի անհատներու փառաւորման վերայ դառնար։ «Հայք»ի ծրագիրն բանաւոր և իրագործելի՞ է թէ ոչ — այս չէ իմ հարցումն, կամ առաջարկին հեղինակն բարի՞ թէ յոռի մարդ է, — այս ևս չէ, այլ մեք Հայքս Հայրենեաց փրկութեան համար թելադրեալ դարման մի քննելու բաւական իմացական և բարոյական կարողութիւն ունի՞նք թէ ոչ, — ահա հարցումն։ — Ոչ ինչ նուազ ցաւալի է քան զարմանալի մըտածել թէ արտասահմանի մէջ թերթեր և անձեր ունինք որ այս կենսական խնդիրն դիտմամբ սխալ կը ներկայացունեն իրենց հետևողներուն, զի մի՛ գուցէ առաջարկն հանրային կարծիքն շահի և հեղինակն իւր արժանաւոր բարոյական վարձքն ստանայ։ Բարեբաղդաբար մեր ներկայ վիճաբանութիւն հայերէն լեզուաւ կը կատարուի, և օտարազգիք չեն տեսներ թէ մեք մինչ իսկ ազգային խնդիր մի իմաստասիրելու կարողութենէ ո՛ր աստիճան զուրկ ենք։ —

Ես այժմիկ մտադիր չեմ ի հրապարակ իջնել կեդրոնի Խնդիրն փաստաբանելու, ոչ իսկ այս տողեր կը գրեմ «Հայք»ի թելադրութեամբ։ Խմբագրին գրիչը դրպած չէ այս յօդուածին։ Ամաչենք, եղբարք, ուսեալ և ազգասէր Հայու մի այս օրինակ չարժառիթներ վերագրելու։ Ազգային խնդիր մի անձնական վէճի վերածել նուաստութիւն է։ Մեր ազգային ոյժեր և ջանքեր կեդրոնացունել պէ՞տք է, և ի՞նչ պէս կարելի է, — ահա մեր խնդիրն։ —

ՀԱՅ ԿՂԵՐԱԿԱՆ ՈՄՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՔ

— Ողջամիտ մարդիկ խրատ կ'առնուն յամենեցունց բայց ոչ յումեքէ կը վարին. իսկ խօթամիտք կը հեռանան ի խրատուց. զի մի գուցէ յայլոց առաջնորդուելու կարծիք տան զանձանց։ (Պոնալ)

— Լաւ է զրկիլ ի բարեկամէ 'ի պատճառս ազատախօսութեան, քան նուաստանալ խաբել զնա, հաճոյ լինելու համար։ (Օտեան)

— Զարաց դգուանքներն միշտ մատնութիւն կը ծածկեն։

— Նախանձն որ միշտ խածնել կը ջանայ, շատ աւելի կը խնայէ հնոց արժանեաց քան թէ նորոց։

— Զարերն ձեռք կուտան միմեանց՝ չարիք գործելու համար. հի՞մ բարիներն պիտի չօգնեն միմեանց՝ բարիք գործելու համար։ (Սիլվիո-Բէլլիգո)

— Ամեն ինչ վնասակար է այնմ՝ որ բարոյն գիտակցութիւնն չունի։ (Մոնթանեը)

— Եթէ նկարիչ լինէի, կը նկարէի զբարեգործութիւն քոշ զդիմօք՝ իբրև զամօթխածութիւն, և մատն ի շրթան՝ իբրև զլռութիւն. իսկ զերախտագիտութիւնն՝ ընդհակառակն՝ փող ի բերան իբրև զհամբաւ։ (Սէկիւր)

— Չկայ բնաւ մոլութիւն մի որ կեղծ նմանութիւն չունենայ առաքինութեան հետ, և չօգտի նովաւ։ (Լապրիւյէր)

— Մոլութեան դէմ ներուին՝ առաքինութեան դէմ դաւաճանութիւն է։ (Պարթելըմի)

— Միշտ արիութիւն։ Առանց այսր պայմանի չիք առաքինութիւն։

— Արիութիւնն առաքինութեան համար մարտնչող արդարութիւնն է։

— Զօրաւոր և բարձր միտքն ազատ է յանձկութենէ և յանհանդուրժութենէ։

Հաւաքեաց ի տղայ ութոց
ՈՍԿԵՐԵՐԱՆ ՍԱՆՏԻԿ ՁԱՐԴԻՐ

Պոսթոն 6 Սեպտ. 91

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

21 ԴԱՍ 16 ՊԱՏԿԵՐՕՔ

ԵՒ

ՑԱՒԵԼՈՒԱԾՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՕՏԱՐ ՀԱՏԸՆՏԻՐ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ ԵՐԿԱՄԻՐՈՒԹԻՒՆ

Ս. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԸ

Գին մէկ թալէռ կամ հինգ ֆրանգ. ճանապարհի ծախքն հրատարակչին վերայ է. բայց յանձնարարութիւնք չեն կատարուիր եթէ գինն կանխիկ չվճարուի։

Տաճկաստան ղրկուելու օրինակներէն յատկապէս վերցուած է Ազգային Ընթերցուածոց յաւելուածն, եւ եթէ Տաճկաստանի վարժարանաց հոդաբարձութիւններէն խնդրուի, գնէն 100ին 50 զեղչ կը լինի.

ԼՈՐԻՍ ՄԵԼԻՔՈՎ

Ահա Հայ մի որ ռուսական պատմութեան մէջ փառաւոր էջ մի գրաւած է և զորոյ անուն հայ ազգն արդար հպարտութեամբ պիտի արտասանէ միշտ։

Մեր կոխոտեալ և անկեալ ցեղն այնպիսի անձնաւորութիւններ կը հանէ ծոցէն որք կ'ապացուցանեն աշխարհի թէ Հայութիւնն չբանուած հանք մ'է պատուական ընդունակութեանց — այդ անձնաւորութեանց մին եղաւ զօրավար Լորիս Մելիքով։

Մելիքով ծնաւ ի Թիֆլիս 1824ին, և ուսաւ ի Լազարեան ուսումնարանին Մոսկուայի, ուստի անցաւ ի զինուորական վարժարան մի, և մնաց մինչև 18րդ. տարին։ 1843ին մտաւ ի բանակն։ 1847էն մինչև 1878 իւր զինուորական գործունէութեան ասպարէզն էր Կովկաս, ուր անհամար ճակատամարտներու մասնակցած է։ Իւր զինուորական փառաց մեծագոյն պսակն ընկալաւ իբրև հրամանատար 1877ի ռուսեթուրք մեծ պատերազմին մէջ, երբ վերջապէս առաւ զԿարս և զԿարին։

Այդ պատերազմին աւարտմանէն իբր վեց ամիս յետոյ Մելիքով կոչուեցաւ պատերազմիլ սարսափելի հանրախտի մի դէմ որ կոտորել սկսած էր Եւրոպական Ռուսիոյ բնակիչներն։ Բռնուողներուն 100ին 82ն կը մեռնէին մէկ շաբթու մէջ։ Խիստ միջոցներ ձեռք առնուլ հարկ էր զհանրախտն իւր ծագման վայրերուն մէջ պաշարելու, և խղդելու համար։ Այդ վտանգաւոր և դժուար պաշտօն յանձնուեցաւ Մելիքովի, որ սքանչելի կորովով և զօրութեամբ շարժելով՝ այրեց ախտամած ամեն նիւթ և առարկայ, և անողոք շղթայ մի հաստատելով՝ արգիլեց ահաւոր ախտին ծաւալումն։

Անկէ քիչ յետոյ Խարքովի կառավարիչ անուանուեցաւ, և իւր պաշտօն կատարեց հիանալի ձեռնհասութեամբ։

Ոչնչականք փորձած էին օդն հանել Աղէքսանդր Բ. ի կառախումբն։ Կայսրն, 1880 Փետր. 24ին զԼորիս Մելիքով պետ կարգեց Գերագոյն Գործադիր Ժողովոյն և տուաւ նմա տիքթադորի իշխանութիւն «տալ ամեն հրաման և ձեռք առնուլ ամեն միջոց որք իրեն հարկաւոր թուին,» և իւր հրամանք «պիտի գործադրուին յամենեցունց անպայման կերպիւ։»



ԼՈՐԻՍ ՄԵԼԻՔՈՎ
ԱՐՏԱՍՊԵԱԼ Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ
ԱՅՐԱԳՐԱՅԷՆ

Հայ Մելիքովն 6 ամիս շարունակեց Զարին փոխանորդն լինիլ, և իւր իշխանութիւն գործածեց մանաւանդ մեղմացունելու քան խստացունելու հակոշնչական միջոցներն, ալ ոչ մի սպանութիւն տեղի չունեցաւ իւր պաշտօնավարութեան միջոցին։ Գերագոյն Յանձնաժողովն լուծուեցաւ, բայց Մելիքով, իբրև Ներքին Գործոց Նախարար և մտերիմ կայսեր, կը պահէր գրեթէ առջի բացարձակ իշխանութիւնն։ Զարաչար կ'աշխատէր։ Քունն կը կոխեր և ինքն դեռ հեռագրեր կ'արտասանէր և հրահանգներ կուտար։ Այս տաժանելի խոնջութեանց կը տոկար սակայն այն յուսով թէ պիտի իրագործէր իւր բարեկարգական ծրագրեր։ Կը հաւատար թէ Խորհրդարան մի հաստատուած պիտի տեսնէր։

Աղէքսանդր Բ., հակառակ Մելիքովի աղաչանաց, դուրս ելաւ 81, Մարտ 13ին, և սպանուեցաւ։ Ներկայ Զարին գահակալութենէն քիչ յետոյ հրաժարեցաւ Մելիքով, յուսավրէպ, և այնուհետև քաղաքական կեանքէ քաշուած մնաց։ Մեռաւ ի Նիս, 1888, Դեկտեմբեր 26ին, ի հասակի 64 ամաց։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս 25 Օգոստ. 91

Ազնիւ Տնօրէն «Հայք»ի,

Պրուսայեցի մատնիչ Գրիգոր՝ զորմէ անցեալ անգամ գրեցի,(1) ձերբակալուած է։ Իսկ Հաճի Անդրէաս փախած է։

Ստուգուեցաւ այն լուր թէ Պատրիարք անցեալ օր դիմած է Կայս. Պալատ հայ բանտարկելոց ընդհանուր ներում խնդրելու համար։ Արդէն բանտարկելոց տէրեր նախապէս դիմած էին Պատրիարքին սոյն խնդրոյ համար։ Դժուար է ըսել թէ փորձառութենէ խրատուելով՝

(1) Այդ նամակ մեզ հասած չէ։ Խմբ.

որոշած է իւր երկչոտ և չափազանց զգուշաւոր ընթացքն փոխե՞լ հանդէպ Թուրք կառավարութեան, թէ միայն կաթողիկոսական ընտրելի լինելու համար ժողովրդականութիւն շահելու նպատակաւ՝ Պատրիարքն ժամանակէ մ'ի վեր քիչ մ'աւելի նախանձաւոր կ'երևի իւր աթոռոյն իրաւանց։ Դպրոցաց տարեկան հանդէսներուն մէջ կարդացուելու ճառերուն օրինակներն վարժարանաց հոգաբարձութիւններէն ուղղակի ուղած էին Թուրք պաշտօնեայք, Պատրիարքն հակառակ հրահանգ ուղղեց առ հոգաբարձութիւնս՝ ճառերն Պատրիարքարան ուղարկել, որ միայն է, ըսաւ, օրինական միջնորդ Ազգին եւ Դրան միջեւ։

Արաբկիրի մէջ Թրքաց և Հայոց միջև տեղի ունեցած ընդհարումն մեծ յուզում կը պատճառէ աստ։ Պաշտարումն սոսկ Թուրք ժողովրդեան կողմէն եղած է, մինչ Հայք կ'աղօթեն եղեր եկեղեցւոյ մէջ։ Թուրք խուժանն ուզեր է խուզարկել եկեղեցին, կասկածելով թէ հոն զէնք պահուած է։ Այդ բարբարոսութեան առջև կը խանգարին եկեղեցւոյ պաշտամունք։ Կ'ըսուի թէ բաւական Հայ մեռած է։ Ստոյգ տեղեկութիւնք դեռ կը պակսին։

ԱՎՏՕԼ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

Թէպրիզ 25 Օգոստ. 1891

. . . խմբագիր «Հայք» պատուական հանդիսի

Քան զամենայն բազմամարդն Պարսկաստանի քաղաքաց է Թէպրիզ, իրր 150 հազար բնակչօք, բոլորովին Պարսիկ, բաց է 700 տուն Հայ և 30 տուն Եւրոպացիներէ։ Այս վերջինքս են Անգղիացի, Գերմանացի և Ֆռանսացի։ Կան և ռուսական, անգղիական, Ֆռանսական եւ Թրքական հիւպատոսք։ Թիւրք միայն օսմանեան հիւպատոսն կայ աստ, դորա քարտուղար և այլ պաշտօնեայք գոլով Յոյն կամ Հայ։ Պարսից մայրաքաղաքն եղող Թէհրան 120 հազար բնակիչ միայն ունի. իսկ բովանդակ Պարսկաստանի բնակչաց թիւն է 7 միլիոն ու կէս, որոյ 1 միլիոն 960 հազարն կը բնակին 99 քաղաքաց մէջ, 3 միլիոն 780 հազարն ի գիւղօրէս, և մնացեալք ալ վրանաբնակ և վաչկատուն են։

Այն որ երբեմն մեծագոյն պետութիւնն էր յԱրեւելս, հզօր ազգաց ոմանց ոսոխն և ոչ սակաւուց գերիչխանն, այժմ կայ հանգոյն կէս չորացած և ճղակոտոր ծառի մի բնոյն, և նորա խոռոչներուն մէջ Հայք ալ իրենց բոյներ շինած՝ իրենց պարէն ու ինչք կը մթերեն թռչնային դործունէութեամբ։ Թէպրիզի Հայք վաճառական են մեծ մասամբ. վաճառական արտածող չոր մրգեղինաց կամ ներածող յախճապակեայ անօթոց, որք արդարեւ երկրին երկու գլխաւոր ճիւղերն են վաճառականութեան։ Քաղաքիս երկրորդ մեծագոյն հարուստն Հայ վաճառական մ'է, միլիոնատէր Թումանեանցն։ Հայերն են նաև սակերիչք, հիւսունք, դերձակք և զինագործք քաղաքիս, գոնէ ճարտար և նուրբ գործերու համար որոց Եւրոպացիք և բնիկ մեծատունք պէտք ունին։ Պարսիկ կրօնական նախապաշարմանց պատճառաւ Հայերն չեն կարող հացագործ, մսագործ ևն. լինիլ, ըստ որում հացն, միսն և որ ի կարգին պղծեալ պիտի նկատուէին Պարսիկներէն։

Հայերն, իրենց թուոյն համեմատութեամբ, աւելի հարուստ են քան Պարսիկներն, և ըստ ամենայնի աւելի զարգացեալ և յառաջադէմ։ Հայք ունին երկու թաղ, մին ԼԻԼԱՎԱ կոչուածն, միւսն ՂԱԼԱ կամ ներսի թաղ, ուր կը բնակին նաև հիւպատոսք, վասնզի Հայոց թաղքն են լաւագոյնք, հոն կը տեսնես մաքուր փողոցներն և գեղեցիկ տներն քաղաքին։ Ունին երեք վարժարան, երեքեան երկսեռ՝ բազմաթիւ ուսանողօք։ Վարժարանաց առաջինն է ԱՐԱՄԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆն, ուր հայերէն, պարսկերէն, ռուսերէն և Ֆռանսերէն լեզուներն և բարձր նախակրթարանի բոլոր դասերն իբնամով կ'աւանդուին։ Հայերէնի և Ֆռանսերէնի դասախօսն է Մեծ. Տիար Կոստանդին Տէր-Ասատուրեան, սքանչելի ուսուցիչ գերմանական մանկավարժական եղանակաց համաձայն։

Պարսկահայոց կրթական կեդրոնն Թէպրիզ է, ոչ թէ Թէհրան։ Թէպրիզի Հայք իմացականօրէն կ'արբանեկեն Թիֆլիսի, և այդ պատճառաւ է որ հոս կը տիրեն ռուսահայոց կրթական եղանակք այսինքն բոլորովին Գերմանականք։ Տաճկաստանի բազմահայ քաղաքաց մէջ անծանօթ է և դեռ երկար ատեն դուցէ անծանօթ պիտի մնայ կրթական այս նոր եղանակ ցորչափ Կ. Պոլիս՝ նոցա իմացական առաջնորդն ինքն՝ մնայ սրպէս այժմ է։

Քաղաքիս երրորդ և փոքրագոյն հայ վարժարանն է բողոքական միսիոնարաց վարչութեան ներքև, և թէպէտ բողոքական Հայեր չկան աստ, վարժարանն անօգուտ չէ վասն զի ունի Բ ի ն տ ի կ ա ր տ ը նի դրութիւնն մանկանց համար, անգղիերէն ուսուցանելու մեծագոյն դիւրութիւն և ձեռագործի ընտիր վարժուհի մի։

Պարսկահայոց լեզուն զրեթէ նոյն է Ռուսահայոց հայերէնին հետ։ Ուրախալի է դիտել որ Թէպրիզի վարժարանաց մէջ ընտիր և յոյժ կանոնաւոր հայերէն կ'ուսուցուի ձեռնհաս կրթիչներու խնամով։

Պարսկական կառավարութեան դիրքն հանդէպ Հայոց համակրական է։ Բայց հեռաւոր աշխարհաց Հայեր մեծապէս կը սխալին կարծելով թէ այս զգայնիկ համակրութիւն մ'է Հայոց աղէտներուն վերայ մարդասիրական արդահատութենէ ծագած, կամ քաղաքագիտական նկատողութիւններէ յառաջ եկած։ Ամենևի՛ն։ Պարսիկ կառավարութիւնն Հայերն օգտակար և ճարտար հպատակներ կը նկատէ, և զայնս հալածելու մէջ ո և է տեսակ շահ չտեսներ։ Դորա համար է որ անոնց հետ համակրանօք կը վարուի։ Բայց եթէ Հայերն անխոհեմ ցոյցերով և չնորհակալութեանց աւելորդ ուղերձներով այս համակրանաց չափազանց կարևորութիւն տան, նախանձոտ Ռուսին և երկչոտ Թրքին աչքին քաղաքական գունով ներկայացուցած կը լինին պարսիկ համակրութիւնն, ինչ որ երախայական անձնամատնութիւն մի կը լինի և պարսաւելի գործ։ Թող լաւ գիտնան այդ երախաներ թէ պարսիկ կառավարութիւնն կրնայ իւր դիրք բոլորովին փոխելու ստիպուիլ Հայոց վերաբերութեամբ եթէ ռուս դիւանագիտութիւնն այնպէս ընել հրամայէ նմա։

ԶՈՕՆ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս 12 Սեպտ. 1891

Բարեկամ,

Քեամիլ փաշայի անկման դռոյթն իր արձագանգ ունեցաւ անշուշտ Ամերիկայի մէջ ալ։ Նա մեծ վէճերի պաշտօնն կատարեց վեց տարի, որ շատ տարի ըսել է այնպիսի Տէրութեան մը և այնքան փափուկ պաշտօնի մը համար։ Քեամիլ խարխուլ շէնքի մը մէջ գործող մարդու մը պէս էր որ ամեն վայրկեան շէնքին այս կամ այն կողմէն ճարճատելով թափող կտորէ մը անհանգիստ կը լինի։ Եգիպտական խնդիրն, Պուլկարականն, Բուսֆիականն, Յունականն, Կրետականն և ոչ նուազ քան զայդ ամենայն Հայկականն, փուչեր եղան Վէզիրին փառաւոր պսակին մէջ։

Այս խնդիրներու առթիւ յաճախ սարսեցաւ Քեամիլի դիրք, բայց երեքպետեան նիզակակցութեան եւ Անգղիոյ աղդեցութիւնն դերակշիռ լինելով Բ. Դրան վրայ և Քեամիլ այդ աղդեցութիւն յօգուտ գործածելու կարողագոյն մարդն նկատուելով, մնաց իր պաշտօնին վրայ մինչև որ Սուլթանն կամաց կամաց համոզուեցաւ թէ Ֆրանքօ-ռուսական միացեալ զօրութիւնք կը հաւասարին երրեակ նիզակակցութեան, թէ Անգղիա ո և է պարտաւորիչ կամ անձնական յանձնառութիւն ըրած չէ Գերմանիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ կողմն բռնելու գալու պատերազմին մէջ։

Սուլթանին ազդող վերջին դէպքերն եղան Փրանքօ-ռուսական բարեկամութեան շլացուցիչ ցոյցերն ի Քրոնսդատ, նաև այն պատիւն զոր Մեծն Բրիտանիա ըրաւ Ֆրանսական նաւատորմին ի Փորթսմըթ։ Թագուհին որ պաշտօնական արարողութիւններէ միշտ քաշուած կը մնայ, անձամբ ընդունեց Ֆրանսական ծովապետն, որով արտայայտուեցաւ Անգլիոյ անկեղծ յարգանքն և բարձր համարումն վերաձնեալ Ֆրանսայի համար։

Սուլթանին ազդող պատճառներու կարգին մէջ Անգլիոյ ընթացքն բաւական մեծ տեղ մը կը բռնէ։ Անգլիա Եգիպտոսն կուլ տալու փորձն կը շարունակէ և պատառն միշտ աւելի խորն կ'իջնէ ամենակուլ որկորին մէջ։ Եէմէնի ապստամբութեան մէջ մատ ունի, կը հաստատեն։ Հայկական խնդրոյն ախոյեաններն Լոնտոնի մէջ բոյն դրած՝ ազդեցիկ անգլիացւոց համակրութիւնը կը վայելեն։ Անտարակուսելի ստուգութեան աստիճան կ'առնու նաև այն թէ ազատականք նորէն անգլիոյ կալվարութեան սանձն ձեռք պիտի առնուն։ Այս ամենն նկատելով Սուլթանն կրնայ որոշած լինիլ թողուլ զՄեծն Բրիտանիա, որ դաշնագիր կնքած է Սուլթանին երկիրն պաշտպանելու և սակայն իր շահերովն միայն կը զբաղի, և դառնալ ողջունել կեղծաւորաբար Ֆրանքօռուսական զօրութիւնն։

Եւ ալ ի՞նչպէս պաշտօնանկ չընէր զՖրեամիլ, որ այնքան ատելի եղած էր Ֆրանսայի և Ռուսիոյ։

Այս պատճառին վրայ պէտք է աւելցունել նաև այն թէ Ֆրեամիլ պատասխանատու կը ճանչցուի շարժման մ'որու նպատակն էր, ըստ զրուցոյ, Համիտն գահէն վար ձգել։

Զպիտի հաւատայի այս զրոյցներու եթէ Ֆրեամիլ փակուած չպահուէր իւր ապարանքին մէջ։

ԱՆԵՐԵԻՈՑԹՆ

ՈՒՂԵՐՁ ՇԱՀԻՆ

Մեծ. Խմբագիր,

Յանուն արդարութեան կ'աղաչեմ անկիւն մը շընորհէք երկոսղիս ձեր պատուական «Հայք»ի մէջ։

Սեպտ. 5ին ժողով մ'եղաւ քաղաքիս մէջ և Պարսից Շահին մատուցուելու համար պատրաստուած ուղերձ մը ներկայացուեցաւ։

Շատ ազգայիններ շատ դիտողութիւններ ըրին. ինծի իրաւացի երևցածներուն մէկ քանին ասոնք են. —

Պարսից Շահը հայ հպատակներուն հետ աղէկ կը վարուի, ադ անուրանալի է և գոհութեան արժանի։ Երբ առիթ եղած է ամենայն հայոց Կաթողիկոսն արտայայտած է Հայոց երախտագիտութիւնն առ Շահն։ Ի՞նչ պէտք է հեռաւոր դաղթականութիւն մ'ալ ելնէ յատուկ ուղերձ ուղղէ Շահին, միթէ Հայրասլետին ըրածն չ'բաւեր։ Եւ միթէ Շահն այնպիսի արտաքոյ կարգի շընորհքներ ըրա՞ծ է ընդհանուր Հայութեան որ աշխարհի ամեն կողմէն ուղերձներ ղրկուելն արդարանայ։

Այն իրիկունը առնախօսներն Շահին գութն, սէրն, գուրգուրանքն Հայոց վրայ ներբողեցին անանկ ոճով մը որ կեղծաւոր և սարուկ ժողովուրդի մը միայն կը վայլէ։

Բայց եթէ ուղերձ մը մատուցանել կ'ուզէին անպատճառ, հա՞րկէր որ Ամերիկայէն մէկը առնուր տանէր զայն մինչև Թեհրան. միթէ Թէհրանի Հայոց առաջնորդ Եպիսկոպոսին չէ՞ին կրնար ղրկել որ նա արժանաւոր կերպով մատուցանէր զայն Շահին։

Եթէ ուղերձն անձամբ մէկը ասկէ տանելու էր, յարմար մարդ մը չէ՞ր գտնուէր որ անուս և անմշակ ոստայնանկ մը, որ իր խուվարարութեամբը նշանաւոր եղած է, կ'առնու կը տանի. ամեն մարդ ծիծաղեցաւ և շատերն ալ իր երեսին ըսին։

Ամերիկայի Հայոց պատիւը պաշտպանելու մտքով կ'ըսեմ թէ այդ անձը այդ պաշտօնին ընտրուած չէ դաղթականութեան կողմէ. ուղերձ տալու խնդիրը եւ ուղերձը տանող անձը որոշուած է Փորթուքալեանի հեռևող փոքր կուսակցութեան կողմէն։ Անոնց պիտի վերաբերի այդ ուղերձն մատուցանելու բարձր քաղաքականութեան պատիւը, և մատուցանողին չքնաղ յատկութեանց բերելու փառքը։

ՈՐԻԿ

14 Սեպտ. 1891 Նիւ Եորք

ԱՐՔՈՂՋԱՔԱՆԱԳԱ՝Ն

ՋՈՒՐՆ ԵՒ ՊՏՈՒՅՈՒՆԵԼ

Վայրենիներն շատ բաներ առանց եփելու կ'ուտեն, ինչպէս կենդանիներն կ'ուտեն իրարու միս հում հում։ Քաղաքակրթեալ ժողովուրդք միսն և բանջարն միշտ և պտուղներն ալ շատ անգամ, եփած կ'ուտեն։ Ցայտնի է թէ եփուելով աւելի համեղ և աւելի դիւրամարս կը լինին ուտելիք, և այլ և այլ սննդական նիւթեր իրարու հետ աւելի լաւ կը խառնուին։ Նաև շատերու ծանօթ է թէ միսն, կաթն, բանջարն, իրենց հում վիճակին մէջ երբեմն վնասակար ճճիներ, ախտածին մանրէներ կը պարունակեն, որոց վնասէն ազատ մնալու ապահով կերպն է զայնս եփել։

Ջուրն ևս սնունդ մ'է, կերակուր մ'է և յոյժ կենսական. այն ևս կրնայ պարունակել վնասակար նիւթեր։ Տարափոխիկ ախտերու մանրէներն ընդհանրապէս յաւ կ'ապրին ջրոյ մէջ և անով կ'երթան կը տարածուին թաղէ թաղ, քաղքէ քաղաք և երկրէ երկիր։ Այս պէտք է որ ամեն մարդ գիտնայ, և շմոռնայ գործնականին մէջ։

Ի՞նչպէս կրնայ գիտցուիլ թէ այս ինչ ջուրն անմաքուր է։

Գոյնէն — որ կը լինի առաւել կամ նուազ գունաւոր, պղտոր.

Համէն — որ փոխանակ անհամ լինելու կուտայ անորոշ զանազան համեր, առաւել կամ նուազ զգալի։

Դիրտէն — զոր ջուրն հանգչելով կը թողու անոթին յատակն։

Հոտէն — որ անախորժ է և որոշ զգալի երբ ջուրն շատ ապականեալ է։

Բայց զգայարանաց օգնական առնլով զմանրացոյցն՝ կրնան մանրադիտք և ախտարանք կատարելապէս դատել տուեալ ջրոյ մի մաքրութեան աստիճանն. ինչ որ մեր հոստելիք, տեսանելիք, ճաշակելիք չեն կրնար մեզ ծանուցանել, կը պարզուին մասնագիտական քննութեամբ։

Ջուր մ'որ արտաքին հանգամանքն շատ չգայթակղեցուներ մեր զգայարանք, կրնայ լինիլ անմաքուր և վնասակար։ Հազարք հազարաց անկասկած խմած են ջրեր որք իրենց մահաբեր ժանտատենդ, դիզաղութիւն, հնտախտ ևն. տուած են։

Կ'ուզե՞ս այդ և այդպիսի տարափոխիկ ախտերէ զերծ մնալ, եռացուր ջուրն և այնպէս խմէ։ Եռացեալ, լաւ եռացեալ կամ եփեալ ջուրն իր վնասակար հանգամանք, ախտածին մանրէ և ապականեալ կազեր կը կորուսանէ։

Կրնաս ամեն երեկոյ քո առօրեայ պիտոյիցդ բաւական եղող քանակութեամբ ջուր եփել, դնել զայն մէկդի, վրան դոցել, և յաջորդ օրն խմել զայն դու և քո ընտանիք։

ՑՅԼ ԵՒ ՑՅԼՊ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՐՈՑԹԲ

— Լրագիրք կը ծանուցանեն թէ Ռուսիա զօրք կը ղրկէ դէպ Արևմուտք, միանգամայն ծովային պատրաստութիւններ կը կատարէ։ Որպէս թէ գերմանական սահմանագլխոյն վերայ ռուս հեծելազօրաց թիւն եռապատկուած է։ Ըստ գերմանական մեկնութեան Ռուսիա յանկարծ զկ. Պոլիս առնուլ կը մտածէ։

ՀՆՏԱԽՏՆ Ի ՏԱՃԿԱՍՏԱՆ

— Մէկ աւուր մէջ, Յուլիս 21ին, Մէքքէի կողմն 405 հոգի հնտախտէ մեռած են. կ'երևի թէ ահաւոր ախտն Կիլիկիոյ մէջ նորէն կը տարածուի. Հալէպի մէջ ևս երևան ելած է։

ՖՌԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿՆ

— Ըստ տեղեկագրութեան գերման սպայի մի որ հանդիսատես եղած է Ֆռանսական վերջին ռազմամարգից, Ֆռանսական զնդերու ճարտարութիւնն և բառնր սպայից կարգապահութիւնն և եռանդն սքանչելի աստիճանի հասած են։

ՊԱՐՍԻԿ ԵՒ ՀԱՅ ԿԸ ԿՌՈՒԻՆ — Ջուլֆայից մեր աշխատակցից երէկ ստացանքՀ ետևեալ հեռագիրը. «Օգոստոս 18-ին Պարսկաստանի Նախավկայ կոչված վանքում ուխտաւորների ահագին բազմութիւն էր հաւաքվել։ Ես ականատես էի հայերի և պարսիկների մէջ ծագած սարսափելի ընդհարման, որը վերջը սպառնալի կերպարանք առաւ։ Հայերը ջարդեցին պարսիկներին. հայերից 1 սպանված է, մէկը վիրաւորված։ Պարսիկները լեռը բարձրացան. հայերը սպաստանվեցան վանքի գաւթում. հրացանաձգութիւն սկսվեց. երեկոյեան պարսիկները փախան։ Հետևեալ օրը ուխտաւորները անցան սահմանը։ Մանրամասնութիւնները նամակով։»

ՄՇԱԿ

ԹՈՒՐՔ ԱՒԱԶԱԿԲ — Շաւշէթ գաւառակի Օքրոբակերտ գիւղից մեզ գրում են. «Ամառը գալուն պէս Թուրք աւազակների խմբերը սկսել են երևան գալ անտառներում և մօտակայ սարերում. նրանք անխիղճ կերպով կողոպտում և կոտրում են ճանապարհներով անց ու դարձ անողներին։ Գաւառապետի և պահապան ձիաւորների բոլոր ջանքերը աւազակներին ձերբակալելու՝ ոչ մի արդիւնք չեն ունենում դեռ ևս։

ՄՇԱԿ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀՐԵԱՑ ՄԻ — «Վոլֆի գործակալութեանը» Կ. Պոլսից հաղորդում են, որ բարոն Հիրշ բանակցութիւններ սկսեց մեծ վէզիրի հետ՝ մեծ շահագիտական գործ սկսել հողաբաժիններ ծախելով Թուրքիայում։ Բարոն Հիրշ մտադրութիւն ունի Փոքր-Ասիայում, երկաթուղիների երկայնութեամբ, 8-10 միլիոն ֆրանկ տարեկան վարձով ընդարձակ հողեր վարձել։ Այդ հողերի վրա մտադրութիւն կայ դաղթատեղի շինել Ռուսաստանից գնացող հրէաների համար։

ՄՇԱԿ

— Միացեալ Նահանգաց հարստութիւնն, ըստ նոր վիճակագրութեան, 65 հազար միլիոնի մօտ է։ Ուրեմն այս երկրի բնակչաց ամեն մէկուն հազար թալէռ պիտի իյնար եթէ հաւասար բաշխումն լինէր։

— Այվազովսկիէն զատ ուրիշ տաղանդաւոր հայ նկարիչ մ'ևս Ռուսիոյ մէջ հռչակ կ'ըստանայ այժմ — Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ։

 Օ. Ֆ. ՀԱՐՐԻՍՈՆԻ ՈՒԱԹԸՐԷՆ

O. F. HARRIS

ԱՏԱՄԲԵՆԱԲՈՅԹ

476 Main St. Worcester, Mass.

ՎԱՐՊԵՏ ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒ ԲԺԻՇԿ Է ԱԿՌԱՆԵՐՈՒ

WORCESTER FIVE CENTS SAVINGS BANK

No. 246 Main St. Worcester, Mass.

Այս պանքան մինչև հինգ սէնթի փոքր գումար կ'ընդունի։ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց առաջին օրէն կը հաշուի դրամի շահն 800ին 4։ Պանքային ժամերն են 9էն 1, և 2էն 4։ Շաբաթ օրերն՝ 9էն 1։

E. B. STODDARD, President.

J. STEWART BROWN, Freasurer.

ՓՈԽԸՆԿԱԳԻՐ

ԵՒ

ՆԱԻԻ ՏՈՄՍԿԻ

Ութ տարուան փորձառութիւնն կ'ապահովէ հաստատակութիւնն թէ մեր փոխանակագրեր են ամենաժան և ապահով Թուրքիոյ ամեն քաղաքաց համար, կեդրոնատեղիք ըլլալով Խարբերդ և Կ. Պոլիս։ Նոյնպէս կրնամք դրամ ղրկել Եւրոպա ուր որ ուզուի պանդայի միջոցով։ Նաև գոհացուցիչ գներով տոմսակ կը վաճառեմք Ամերիկայէն Եւրոպա, Եւրոպայէն Ամերիկա ճամբորդելու համար, նոյնպէս Թուրքիոյ ամէն նաւահանգիստներէն գալու և երթալու համար Թրիէսթի ճամբով։ Նամակներու անմիջապէս կը պատասխանուի։ Պէտք է դիմել կամ գրել ինձ այսպէս M. S. T. Nahigian, Worcester Mass.

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱԳԻՐՔ ԱՌՔՈՎ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՓՈԽԸՆԿԱԳԻՐ

Խարբերդ, Տիգրանակերտ, Մալաթիա, Կ. Պոլիս, Տրապիզոն, Մարսիլիա, և Տաճկաստանի ուրիշ քաղաքներ, դրամ կը ղրկեմ ապահով և գոհացուցիչ պայմաններով։

Դիմել առ Տ. Մ. Շուշանեան

D. M. Shooshan 41 Exchange St. WORCESTER MASS

H. A. BASSETT

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԿՕՇԻԿԻ

259 MAIN ST. WORCESTER, MASS.

Աղէկ ապրանք և ժան։

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն։

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

LOUIS MULLER

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԳԻՆԻՈՑ ԵՒ ՁՕՐԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԵԱՑ

304 WEST 38 th STREET

8դ. Ավինիւին մօտ Նիւ Եորք

ED. LEGOLL, PHARMACIST,

Successor to W. CASWELL,

Pharmacie Francaise,

286 SEVENTH AVE, BET 26 TH & 27 TH STS., N. Y.

ESTABLISHED 1846.

Դեղագրեր կը պատրաստուին խնամով

TANQUEREY

ԼՈՒՍԱՆԿԱՐԴԵՐ

63 and 65 W. 14 th St. Corn. Sixth Ave. New York.

Կուզե՞ս ¾ բնական մեծութեամբ մէկ կենդանագիրդ ծրագրչեալ (crayon) և 12 օրինակ լուսանկար պատկերդ, ՄԻԱՅՆ ՀԻՆԳ ԹԱԼԷՌ ՎՃԱՐԵԼՈՎ. ներկայացուր զայս կտրօն վերոյիշեալ հռչակաւոր արուեստանոցն։ Վճարուին պիտի ընես հետեւեալ կերպով.

Երբ նստիս լուսանկարդ հանելու համար.....$2.50

Երբ կենդանագիրդ և լուսանկարքդ աւարտին..2.50

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԴԱԲԻԷԼԵԱՆ